



## 121. ԹԱԿԸԵՆՔՅ ՕՏԸԵՆՔՅ, ՕՏԸԵՆՔՅ ԹԱԿԸԵՆՔՅ...

Մին շատ ըսկուպոյ մարթ ա ինձնմ՝ էնքան ըսկուպոյ, վըեր սաղ կյանքումը միհետե կոշտ փորավ հաց լի կերալո Հինչ վըեր ըխշաղում ար, լոխ թուփ ար անում, շատ հըրուստանում:

Էտ մարթը մեհետ քյինամ ա մին քաղաք, նի յա մննում ըստալավոյը, օզում ա վըեր մին աման խորագյ օտըն: Կյինը հըրցնում ա, ասում ըն՝ տասը կապեկ ա: Իրեք կապեկ ա տամ փայտոն նստում, քյինամ կոխկե մին քաղաք, նի մննում ըստալավոյը, տըեսնում համին խորագյը օթ կապեկ ա: Լուցեղ էլ ա ասում՝ թանգյ ա: Նորից իրեք կապեկ ա տամ փայտոն նստում, քյինամ մին օրիշ տըեղ, ըտըեղ օխտը կապեկ տամ, մին աման խորագյ օտում, ետ տըոնալիս մին մարթու տոն զոնադ ինգյինմ: Մարթը տանը լի ինձնմ: Մին խիլա վըեր կենում ըն, կյամ ա, հըրցնում.— Ա՛ կնեզյ, թակըենքյ օտըենքյ, թա՝ օտըենքյ թակըենքյ, կնեզյը թա՝ օտըենքյ թակըենքյ: Էտ մարթը մնամ ա տահանց իրըսներին յիշիլիս, գյինդիմ ա թա ուրան ըն ասում, օզում ա թա տուս կյա փախճի, տնատարը թա՝ յավաշ տու մըեր զոնազն ըս, կարող ըս ըրիսլին կինաս, նըստե:

Տահանք հաց ըն օտում, պրծնում, ետեան մին կիրկիժ տոնն օնում, ըսկըսում վըեր թակըելը: Էտ մարթը մնամ ա պերանը պեց:

Յտնան հըրցնում ա, թա էս հինչ ա՞ղաթ ա ծըեր քըղաքումը, կը-  
նեգյը թա՝ էս կիրկիժը իմ առաջվա մարթինն ա. տա շատ ըսկու-  
պոյ մարթ ա իլան, հաց չի կերալ, թա քուզտանա, լոխ թուի ա  
ըրալ, պահալ. էս տները, մնկլցը, հարստությունը լոխ ուրան  
թողածն ա, ինքյը կիրալ չի, մըեռալ ա, լոխ թողալ ինձ, ես էլ  
տանը յիրա մարթ ըմ պերալ, էս ա՝ իմ էրկուփինչի մարթըս ա.  
մեհենգյ ուրան թաղալ ըմ, կիրկիժը պահալ, ամմըեն օր համ  
ուրան կիրկիժը վըեր ընք թակում, համ էլ թողածն օտում:

Էս մարթը տա վըեր ըսկանում ա, մանեն կծում ա. ճելլի եր  
ա կենում քյինամ ուրանց քաղաքը, նի մննում բազարը, մին վըխ-  
մարու շախկա ինքյ օնում, նհըետն էլ մին քանի չեթվեռ կյինի,  
օրիշ շատ տես-տեն, մին համբալ փըռնում, զարկում տոն, կնզանց  
փըսպարում, թա ամմըեն հինչ շինի, սարքե, էս ա կյամ ըմ: էտ  
համբալը վըեր հանում ա տրա տոն, փասպարքը կնզանն ասում,  
կնեգյը հըմբալըեն թա՝ էտ իմ մարթըս չի, հալըաթ ուզեցալ ըս  
ուրանցն տոն քյինաս, շիլ ըս ինպյալ, եկալ ըստըեղ: Համբալը թա՝  
չէ, քու մարթըտ ա, էս էլ ուրան տոնն ա, ես հաստադ ըմ գլու-  
գիմ, ուրան էլ ճինանշտիմ ըմ: Վերը, կնզանը հըվըտցնում ա,  
պեռնը թողում ըտըեղ, ետ տըեռնում:

Մարթը վըեր կյամ ա տոն, կնեգյը հըրցնում ա, թա՝ էս տես-  
տենը տու վը՝ զարկալ: Մարթը թա՝ հա՛, կնեգյը թա՝ պա ես էլ  
ասալ ըմ էս իմ մարթըս չի, օրիշ կինի: Մարթը թա՝ խե՛: կնեգյը  
թա՝ պա էս ա քանե՞ տարե յա, ես քու կնեգյըտ ըմ, տու հալան  
մհետե հաց լըս կերալ, վըեր քուզտանաս, մեհենգյ ես հունց հը-  
վա՞տամ, վըեր տու իմ մարթըս ըս: Մարթը թա՝ ա՛ կնեգյ, պա  
ասել չը՝ ս վըեր էսհինչ քըղաքումը իստի պեն ըմ տըեսալ, տրանա  
ետը ես հուր հե՞տե յըմ թուի անում պահըեմ:

Տրանա ետն էտ մարթն ըսկուում ա լավ օտըել-խմըելը, ամ-  
մըեն օր լավ քյեփեր անըելը:

